

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն



Համայնքների ընդհանուր պատկերը և դասակարգումը Հայաստանում

Համայնքների ուսումնասիրության ծրագրի հաշվետվություն

Երևան 2006

«Համայնքների ուսումնասիրություն ծրագիրը» իրականացրել է Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը:

Հետազոտական հիմնական թիմը՝

Վարազդատ Կարապետյան, Տ.Գ.Թ., ծրագրի ղեկավար
Մուշեղ Թումասյան, հետազոտական աշխատանքների ղեկավար
Գագիկ Թորոսյան, Տ.Գ.Թ., հետազոտության համակարգող
Գենարի Թերզիկյան, Մ.Գ.Թ., դոցենտ, մաթվիճակագիր
Ելենա Մանուկյան, Տ.Գ.Թ., վիճակագիր-վերլուծաբան
Վարսենիկ Մնացականյան, հետազոտող-օգնական
Նունե Չոհրաբյան, ադմինիստրատիվ օգնական

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը շնորհակալություն է հայտնում խորհրդատվություն իրականացրած և Հետազոտական հիմնական թիմին աջակցություն ցուցաբերած անձանց և մասնագետներին, մասնավորապես՝ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Վահե Դանիելյանին և անկախ փորձագետ Հրաչյա Պետրոսյանին:

Ցուցաբերած աջակցության համար Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը շնորհակալություն է հայտնում նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակիցներից կազմված մասնագիտական խմբի անդամներին, մասնավորապես՝ նախարարի տեղակալ՝ Արծվիկ Մինասյանին, նախարարի խորհրդական՝ Արմեն Սահակյանին, Սոցիալական աջակցության վարչության պետ՝ Աստղիկ Մինասյանին, Մեթոդական օգնության բաժնի պետ՝ Արմեն Մարգարյանին, ինչպես նաև ՀԲ Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի համակարգող՝ Արսեն Համբարձումյանին, Սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների ղեկավարներին և հետազոտության մեջ ընդգրկված համայնքների ղեկավարներին և դպրոցների տնօրեններին:

Բովանդակություն

Նախաբան	4
Ա. Հետազոտության նախագծումը և իրականացումը	5
Նպատակները	5
Գործիքների ընտրությունը և տվյալների հավաքումը.....	6
Հետազոտությունում ընդգրկված համայնքները	8
Բ. Հայաստանի համայնքների ընդհանուր նկարագիրը	10
Համայնքների մեծությունը և բնակչությունը	10
Սոցիալ-տնտեսական ենթակառույցների առկայությունը	13
Հեռավորությունը կենտրոնից և ճանապարհների վիճակը	16
Անշարժ գույքի գները.....	19
Աղքատության և սոցիալական ծառայությունների սուբյեկտիվ գնահատականները	21
Գ. Համայնքների դասակարգման և խմբավորման մեթոդաբանություն	25
Անհրաժեշտությունը	25
Մեթոդաբանությունը	26
Կանխավարկածների ձևակերպումը և ստուգումը	27
Համայնքների դասակարգումը	30
Համայնքային գործակիցների ստացումն ընտանեկան նպաստների համակարգում	33
Հավելված 1. Համայնքների դասակարգման մեթոդաբանության մանրամասները	35
Հավելված 2. Ընտանեկան նպաստների բանաձևի տարածքային գործակիցները հետազոտությունում ընդգրկված համայնքների համար	41

Նախաբան

«Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ոչ առևտրային ոչ քաղաքական անկախ հետազոտական ինստիտուտը¹ «Հայաստանի Հանրապետության Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման բարելավման ծրագրի» շրջանակներում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատվերով 2006 թվականին իրականացրեց «Համայնքների ուսումնասիրության» ծրագիրը:

Ծրագրի նպատակն էր ուսումնասիրել Հայաստանի համայնքների առանձնահատկությունները, մշակել համայնքների գնահատման և դասակարգման մոտեցումներ, գնահատել տրամադրվող սոցիալական ծառայությունները, բացահայտել՝ ըստ համայնքների տիպերի, տնային տնտեսությունների միջև կենսամակարդակի կապը:

Ծրագրի իրականացման համար, ինչպես նախատեսված էր տեխնիկական հանձնարարականով, կազմակերպվեցին մի շարք հանդիպումներ և քննարկումներ, ուսումնասիրվեց առկա տեղեկատվությունը, մշակվեց համայնքների ուսումնասիրության հարցաթերթ, որի միջոցով իրականացվեց համայնքների վիճակագրական հետազոտություն, ստեղծվեց ամփոփ տվյալների բազա և այն վերլուծվեց:

Ծրագրի իրականացման արդյունքում.

- Ստեղծվել է Հայաստանի 555 գյուղական համայնքների տվյալների բազա, որում ընդգրկված են մի շարք սոցիալ-տնտեսական տվյալներ համայնքների և դրանց բնակչության վերաբերյալ, որը կարող է կիրառվել համանման և այլ մի շարք վերլուծությունների համար:
- Վերլուծվել և գնահատվել են գյուղական համայնքների հիմնական առանձնահատկությունները, որոնք կարող են բնորոշիչ լինել համայնքներում բնակվող միջին տնային տնտեսության բարեկեցության համար:
- Մշակվել է մեթոդաբանություն, որը թույլ է տալիս դասակարգել Հայաստանի բոլոր գյուղական համայնքները 18 առանձին դասերում, և դրա հիման վրա, ելնելով սոցիալական կոնկրետ ծառայության տրամաբանությունից, հեշտորեն կատարել համայնքների խմբավորում կամ, այլ կերպ ասած՝ սոցիալական ծառայությունների տրամադրման ընթացքում, ըստ անհրաժեշտության, կատարել համայնքների տարանջատում:
- Մշակվել է սույն վերլուծական գեկույցը, որն ըստ էության ծրագրի վերջնական հաշվետվությունն է:

Չեկույցի առաջին մասում ներկայացվում են հետազոտության մեթոդաբանությունը և հետազոտությունում ընդգրկված համայնքները: Երկրորդ բաժինը նվիրված է իրավիճակի նկարագրությանը, ներկայացվում են առանձին ցուցանիշների հակիրճ վերլուծություններ, տրվում են սոցիալական ծառայությունների առաջնահերթությունների գնահատումներ: Չեկույցի երրորդ մասում ներկայացված են համայնքների գնահատման և դասակարգման մեթոդաբանությունը և բարեկեցության տարբերությունները բնութագրող առաջարկվող համայնքային դասերը: Ներկայացվում է նաև, որպես օրինակ, Ընտանեկան նպաստների համակարգում ներկայում կիրառվող համայնքների տարբերակման գործակցի հաշվարկը հետազոտությունում ընդգրկված համայնքների համար:

Չեկույցին կցված են հավելվածներ և լազերային կրիչով՝ «Համայնքների ուսումնասիրության տվյալների բազան» (SPSS ծրագրային փաթեթով) և «Համայնքների ուսումնասիրության հարցաթերթը»:

¹ Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնի մասին տե՛ս www.edrc.am

Ա. Հետազոտության նախագծումը և իրականացումը

Նպատակները

Հայաստանում զարգացման տարածքային անհամաչափություններն ակնառու են: Տնտեսության ծանրակշիռ հատվածն արտադրվում և վերարտադրվում է մայրաքաղաքում և դրա շրջակայքում: Առանձին համայնքներ գրեթե անմասն են ոչ գյուղատնտեսական գործունեությունից և եկամուտների ստեղծման գործընթացից: Համայնքները միմյանցից էապես տարբեր են և առանձնահատուկ են՝ թե՛ իրենց չափերով և աշխարհագրական դիրքով, թե՛ սոցիալական և տնտեսական (արտադրական) ենթակառուցյունների առկայությամբ և/կամ մատչելիությամբ: Սրանք անդրադառնում են բնակչության բարեկեցության վրա և ծնում առանձին համայնքներում մարդկանց սոցիալական և տնտեսական վիճակի էական տարբերություններ: Հանրապետության տարբեր համայնքներում բնակվող նույն առողջական, կրթական, մասնագիտական կարողություններ և ժողովրդագրական կազմ ունեցող ընտանիքների բարեկեցությունը կարող է էապես տարբերվել՝ կախված իրենց համայնքի առանձնահատկություններից:

Սոցիալական քաղաքականության տեսանկյունից կարևորվում են համայնքների առանձնահատկությունների բացահայտումը և ընտանիքների անապահովության վրա դրանց ազդեցության ուժի գնահատումը: Սա հնարավորություն կտա ըստ անհրաժեշտության առանձին խումբ համայնքներում կիրառել սոցիալական ծառայությունների տրամադրման որոշ տարբերակված մոտեցում՝ մեծացնելով համակարգի արդարությունը և արդյունավետությունը:

Հետազոտության նպատակներն են՝

- ուսումնասիրել և բացահայտել Հայաստանի համայնքների առանձնահատկությունները,
- մշակել համայնքների գնահատման և դասակարգման մեթոդիկա,
- բացահայտել ըստ համայնքների տիպերի (դասերի) տնային տնտեսությունների կենսամակարդակի միջև կապը,
- գնահատել տրամադրվող սոցիալական ծառայությունները և դրանց առաջնահերթությունները:

Հետազոտության նպատակների իրագործման համար ուսումնասիրվել և վերլուծվել են առկա պաշտոնական և ոչ պաշտոնական տեղեկատվությունը, այլ կազմակերպությունների և անհատների կողմից իրականացված համապատասխան աշխատությունները, կազմակերպվել են հանդիպումներ և քննարկումներ փորձագետների, քաղաքականություն մշակողների, համայնքների ղեկավարների և համայնքներում բնակվող մարդկանց հետ: Այնուամենայնիվ, առաջադրված նպատակների իրագործման համար պահանջվող տեղեկատվությունը բավարար չէր կամ ընդհանրապես բացակայում էր: Ուստի և դաշտային վիճակագրական հետազոտությունների միջոցով հավաքվել է անհրաժեշտ տեղեկատվությունը և ստեղծվել է Հայաստանի մակարդակով ներկայացուցչականություն ապահովող համայնքների վերաբերյալ տվյալների բազա: Ստեղծված տվյալների բազայի վերլուծությունն էլ հիմնականում հիմք է ծառայել հետազոտության խնդիրների լուծման համար:

Գործիքների ընտրությունը և տվյալների հավաքումը

Առաջադրված հետազոտության հիմնական նպատակների և խնդիրների իրականացման տեսանկյունից չափազանց կարևոր է Դաշտային հետազոտությամբ տվյալների հավաքումը և վերլուծությունը, առանց որի հետազոտության նպատակների իրագործումը հնարավոր չէր լինի:

Տեղեկատվության հավաքման հիմնական գործիքը «Համայնքների ուսումնասիրության հարցաթերթն» է, որը նախատեսվել է համայնքի ղեկավարի կամ աշխատակազմի պատասխանատու պաշտոնյայի համար: Հարցաթերթը մշակվել է համայնքների ղեկավարների, փորձագետների և համայնքում բնակվող մարդկանց հետ հանդիպումների և խորհրդակցությունների արդյունքում: Հարցաթերթի մշակմանը մասնակցել է նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ստեղծած հատուկ Մասնագիտական աշխատանքային խումբը:

Հարցաթերթի բուն նպատակն էր հավաքել այնպիսի տվյալներ, որոնց վերլուծության միջոցով հնարավոր կլինի պարզել Հայաստանի համայնքների առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը տնային տնտեսությունների բարեկեցության վրա: Երկրորդ կարևոր նպատակն էր ստուգել համայնքների տարբերակման նախապես առաջ քաշված կանխավարկածները: Ուստի կանխավարկածների ստուգման փոփոխականները նույնպես ընդգրկվել են հարցաթերթում:

Յուրաքանչյուր հետազոտված համայնքի համար լրացվել է մեկ հիմնական հարցաթերթ, որը ներկայացնում է ամբողջ համայնքը: Հարցաթերթում ընդգրկված ցուցանիշները հիմնականում ընդհանրական են ողջ համայնքի համար (բնակլիմայական, աշխարհագրական և ֆիզիկական տվյալներ, ենթակառուցվածքի առկայություն, տնտեսություն ոլորտներ և այլն): Առավել փոքր թվով տվյալների գծով տեղեկատվությունն է, որ յուրաքանչյուր տնային տնտեսության համար կարող է հատուկ լինել: Այս դեպքերում, սովորաբար, օգտագործվել է կա՛մ առկա պաշտոնական վիճակագրությունը, և/կա՛մ փորձագիտական գնահատականները (օրինակ՝ եկամտաբերությունը հողագործությունից, հողի կամ բնակարանի վարձակալության գինը և այլն): Որոշ ցուցանիշներ կարող են լինել սուբյեկտիվ և էապես տարբեր լինել առանձին տնային տնտեսությունների համար (օրինակ՝ համայնքում իրականացվող սոցիալական ծրագրերի արդարության գնահատականը, կամ համայնքում բնակվող տնային տնտեսությունների կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը և այլն): Հենց նման դեպքերի համար էլ մշակվել է դաշտային հետազոտության մյուս գործիքը՝ Դպրոցի տնօրենների/մանկավարժների հարցաթերթը: Այս հարցաթերթը լրացվել է համայնքի կառավարման հետ անմիջական կապ չունեցող, սակայն գյուղական համայնքի հասարակությունը ներկայացնող, «բան ու գործը» ճանաչող, բանիմաց անձանց կողմից՝ ինչպիսիք հանրակրթական դպրոցների մանկավարժներն են:

Այսպիսով, Դպրոցների տնօրենների/մանկավարժների հարցաթերթի միջոցով հավաքված տեղեկատվությունը որպես այլընտրանք կարող է առանձին դեպքերում համադրվել համայնքապետերից ստացված տեղեկատվության հետ՝ ըստ անհրաժեշտության:

Հաշվի առնելով հետազոտության նպատակները և առանձնահատկությունները՝ անհրաժեշտ էր տեղեկություններ ստանալ առավելագույն թվաքանակով համայնքների վերաբերյալ: Որոշում է կայացվել չկատարել ընտրանք, և ընտրանքում ընդգրկված համայնքների հետազոտություն: Փոխարենը, փորձ է արվել հետազոտությունն անցկացնել համատարած, կամ հետազոտությունում նվազագույնն ընդգրկել Հանրապետության յուրաքանչյուր երկրորդ համայնքը:

Հարցաթերթն ուղարկվել է Հանրապետության բոլոր գյուղական համայնքների և փոքր քաղաքային համայնքների ղեկավարներին: Հետազոտության իրահանգավորումը և վերահսկումն իրականացվել է ստեղծված աշխատանքային խմբերի և Սոցիալական

ծառայության տարածքային շուրջ 40 գրասենյակների կողմից: Ստեղծվել են հատուկ աշխատանքային խմբեր, որոնք այցելել են համայնքներ՝ գործընթացը վերահսկելու և պարզաբանումների համար:

Դաշտային աշխատանքների համար սահմանված ժամկետը լրանալուց և յուրաքանչյուր մարզից նվազագույնը 50 տոկոս հարցաթերթ հավաքագրելուց հետո միայն դադարեցվել է տեղեկատվության հավաքման գործընթացը: Արդյունքում համայնքների հետազոտության հարցաթերթը լրացվել է հանրապետության 555 գյուղական համայնքների, 15 քաղաքային համայնքների համար, իսկ Դպրոցի տնօրենների/մանկավարժների հարցաթերթը՝ 222 համայնքների համար:

Տվյալների հավաքման պատահականության սկզբունքը պահպանվել է: Հետազոտությունում համայնքների չընդգրկվածությունը պայմանավորված չէ որևէ դիտավորությամբ, և/կամ ընդգրկված համայնքները չեն ընդգրկվել որևէ ավգորիթմի համաձայն: Հետազոտությունում ընդգրկված համայնքների վերլուծությունը նույնպես չի բացահայտել տարածքային, բարձունքային կամ մեկ այլ գործոնի համաձայն համայնքների ընդգրկման յուրօրինակություն: Ուստի կարելի է պնդել, որ հավաքված տեղեկատվությունը պատահական է, և կարող է ներկայացուցչական լինել ամբողջ Հանրապետության համար:

Հետազոտության հիմնական ֆոկուսը գյուղական համայնքներն են եղել, քանի որ մեթոդապես բավականին դժվար կլիներ տվյալ խնդրի տեսանկյունից գնահատել քաղաքային համայնքների բնակչության բարեկեցությունը և դրա վրա ազդող գործոնները: Քաղաքային համայնքների թվաքանակն անհամեմատ փոքր է և առավել ճիշտ կլինի ոչ թե միասնական այլ հատուկ մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր քաղաքային համայնքի համար: Այնուհանդերձ, փոքր քաղաքային համայնքներն ընդգրկվել են հետազոտությունում, որոնց համար կիրառվել է Համայնքների ուսումնասիրության հարցաթերթի փոքր-ինչ մշակված՝ քաղաքային պայմանների համար ադապտացված տարբերակը:

Թեև քաղաքային համայնքների մասով ստեղծվել է տվյալների բազա, սակայն սույն փաստաթղթում վերլուծությունները վերաբերվում են միայն Հայաստանի գյուղական համայնքներին:

Հետազոտությունում ընդգրկված համայնքները

Հանրապետությունում կան 867 բնակեցված գյուղական համայնքներ: Հետազոտությունում ընդգրկվել են 154 փոքր (մինչև 500 բնակիչ ունեցող) գյուղական համայնքներ և 401 միջին և մեծ գյուղական համայնքներ: Արդյունքում, հետազոտությունն ընդգրկեց գյուղական համայնքների ընդհանուր թվաքանակի մոտ 64 տոկոսը, ընդ որում ամենացածր ընդգրկվածության ցուցանիշը Շիրակի մարզում է՝ 54.5 տոկոս, իսկ ամենաբարձրը Վայոց Ձորում՝ 78.0 տոկոս: Ամենաշատ հարցաթերթ լրացվել է Լոռու մարզում՝ 76 գյուղական համայնքների համար:

Աղյուսակ 1. Գլխավոր համակցությունը և հետազոտությունում ընդգրկված գյուղական համայնքները

	Հարթավայրային	Նախալեռնային	Լեռնային	Բարձր լեռնային	Ընդամենը
<i>Գլխավոր համակցություն</i>					
Ընդամենը գյուղական համայնքներ*	317	220	166	164	867
Մեծ և միջին գյուղեր	258	147	92	86	583
Փոքր գյուղեր	59	73	74	78	284
<i>Հետազոտությունում ընդգրկված համայնքները</i>					
Հետազոտված գյուղական համայնքներ	221	137	97	100	555
Մեծ և միջին գյուղեր	184	95	60	62	401
Փոքր գյուղեր	37	42	37	38	154
<i>Հետազոտության ծածկույթը (տոկոս)</i>					
Ընդամենը	69.7	62.3	58.4	61.0	64.0
Մեծ և միջին գյուղեր	71.3	64.6	65.2	72.1	68.8
Փոքր գյուղեր	62.7	57.5	50.0	48.7	54.2

* հաշվառված չեն դատարկ գյուղերը

Աղյուսակ 2. Հետազոտությունում ընդգրկված գյուղական համայնքների մարզային կառուցվածքը

	Մեծ և միջին գյուղեր	Փոքր գյուղեր	Ընդամենը	Մեծ և միջին գյուղեր	Փոքր գյուղեր	Ընդամենը
	<i>հետազոտությունում ընդգրկված համայնքների քանակը</i>			<i>տոկոսը գլխավոր համակցության նկատմամբ</i>		
Արագածոտնի մարզ	43	23	66	67.2	48.9	59.5
Արարատի մարզ	57	2	59	65.5	33.3	63.4
Արմավիրի մարզ	61	3	64	69.3	50.0	68.1
Գեղարքունիքի մարզ	43	13	56	72.9	48.1	65.1
Լոռու մարզ	45	31	76	72.6	72.1	72.4
Կոտայքի մարզ	32	5	37	61.5	62.5	61.7
Շիրակի մարզ	44	19	63	62.0	42.2	54.3
Սյունիքի մարզ	27	38	65	90.0	52.1	63.1
Վայոց Ձորի մարզ	19	13	32	82.6	72.2	78.0
Տավուշի մարզ	30	7	37	63.8	63.6	63.8
Ընդամենը	401	154	555	68.8	54.2	64.0

Հետազոտությունում ընդգրկված գյուղական համայնքներում բնակվում է Հայաստանի գյուղական բնակչության 67 տոկոսը: Թեև Շիրակի մարզում հետազոտության ծածկույթն ամենափոքրն է (54.3 տոկոս), այնուամենայնիվ, այս մարզի գյուղական բնակչության ավելի քան 66 տոկոսը ներկայացված են (բնակվում են) հետազոտությունում ընդգրկված համայնքներում: Առանձին մարզերում հետազոտությունում ընդգրկված համայնքների

բնակչությունը գերազանցում է այդ մարզի բնակչության ավելի քան 80 տոկոսը (Սյունիք և Վայոց Ձոր), իսկ ամենացածր ցուցանիշը Կոտայքի մարզում է՝ 55.6 տոկոս (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Զետազոտությունում ընդգրկված համայնքների և դրանց բնակչության մարզային ծածկույթը (տոկոս փաստացիի նկատմամբ)

	Մեծ և միջին գյուղեր	Փոքր գյուղեր	Ընդամենը	Մեծ և միջին գյուղեր	Փոքր գյուղեր	Ընդամենը
	<i>Գյուղական համայնքների քանակը</i>			<i>Գյուղական բնակչությունը*</i>		
Արագածոտն	67.2	48.9	59.5	59.2	54.3	58.7
Արարատ	65.5	33.3	63.4	64.0	49.3	63.9
Արմավիր	69.3	50.0	68.1	68.8	57.0	68.7
Գեղարքունիք	72.9	48.1	65.1	77.1	55.9	76.1
Կոտայք	61.5	62.5	61.7	55.6	57.2	55.6
Լոռի	72.6	72.1	72.4	68.1	77.0	69.2
Շիրակ	62.0	42.2	54.3	68.5	49.2	66.4
Սյունիք	90.0	52.1	63.1	89.0	66.9	81.7
Վայոց Ձոր	82.6	72.2	78.0	87.6	75.1	85.8
Տավուշ	63.8	63.6	63.8	64.2	66.6	64.3
Ընդամենը	68.8	54.2	64.0	67.6	62.6	67.2

*2001թ. մարդահամարի առկա բնակչության տվյալներ

Զետազոտությունում ընդգրկվել են մինչև 500 բնակիչ ունեցող գյուղական համայնքների (այսուհետ՝ «Փոքր համայնքներ») 54 տոկոսը և 500-ից ավելի բնակիչ ունեցող գյուղական համայնքների (այսուհետ՝ «Մեծ և միջին համայնքներ»)՝ մոտ 69 տոկոսը: Ընդգրկվածության ամենամեծ աստիճանն ունեն Մեծ և միջին Բարձր լեռնային (72 տոկոս) և Զարթավայրային (71 տոկոս) գյուղական համայնքները, իսկ ամենափոքրը՝ Բարձր լեռնային Փոքր գյուղական համայնքները (մոտ 49 տոկոս): Այնուհանդերձ, վերջինների բնակչության շուրջ 55 տոկոսը և Բարձր լեռնային գյուղական համայնքների բնակչության 77 տոկոսը ներկայացված են ուսումնասիրությունում: Ուսումնասիրությունում ընդգրկվել է Փոքր Զարթավայրային համայնքների 63 տոկոսը, որում բնակվում է Զայաստանի բոլոր նման համայնքների բնակչության մոտ 75 տոկոսը: Այսինքն՝ ուսումնասիրությունում բավականաչափ ներկայացված են բոլոր տիպի համայնքները, յուրաքանչյուր տիպի համար ընդգրկված է յուրաքանչյուր երկրորդ համայնքը (տե՛ս աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Զետազոտությունում ընդգրկված համայնքների և դրանց բնակչության ծածկույթն ըստ բարձունքային կիսի (տոկոս փաստացիի նկատմամբ)

	Զարթավայրային	Նախալեռնային	Լեռնային	Բարձր լեռնային	Ընդամենը
<i>Համայնքների քանակը</i>					
Մեծ և միջին գյուղեր	71.3	64.6	65.2	72.1	68.8
Փոքր գյուղեր	62.7	57.5	50.0	48.7	54.2
Ընդամենը	69.7	62.3	58.4	61.0	64.0
<i>Բնակչությունը*</i>					
Մեծ և միջին գյուղեր	68.8	59.7	65.5	76.6	67.6
Փոքր գյուղեր	75.1	65.9	57.5	54.9	62.6
Ընդամենը	69.0	60.2	64.3	74.4	67.2

*2001թ. մարդահամարի առկա բնակչության տվյալներ

Բ. Հայաստանի համայնքների ընդհանուր նկարագիրը


Համայնքների մեծությունը և բնակչությունը

Հայաստանի հանրապետության տարածքը վարչատարածքային առումով բաժանվում է 11 մարզերի (Ներառյալ Երևան քաղաքը, որն ունի մարզի կարգավիճակ) և համայնքների (Երևանի դեպքում՝ թաղային համայնքների): Մարզերում և Երևան քաղաքում իրականացվում է պետական կառավարում, իսկ համայնքներում (Ներառյալ թաղային համայնքները) իրականացվում է տեղական ինքնակառավարում²: Յուրաքանչյուր համայնք կարող է ընդգրկել մեկ կամ ավելի թվով բնակավայրեր:

Հանրապետությունում կան 47 քաղաքներ (Երևանից բացի) և, համապատասխանաբար, 47 քաղաքային համայնքներ: Սրանցից 39-ը մեկ ինքնուրույն քաղաք-համայնքներ են, իսկ Աշտարակ, Սևան, Ալավերդի, Ախթալա, Թումանյան, Շամլուղ, Ստեփանավան, Ջերմուկ քաղաքային համայնքներն ընդգրկում են սև հարակից գյուղական բնակավայրերը:

Քաղաքներում բնակվում է Հայաստանի բնակչության շուրջ 64 տոկոսը, որի 53 տոկոսը կամ ընդհանուր բնակչության մոտ 34 տոկոսը բնակվում է Երևանում³, իսկ մոտ 30 տոկոսը՝ մյուս քաղաքային համայնքներում: Հայաստանի գյուղական համայնքներում է բնակվում ընդհանուր բնակչության մոտ 36 տոկոսը կամ շուրջ 1.2 միլիոն մարդ:

Գծապատկեր 1. Հայաստանի մշտական բնակչության կառուցվածքը 2006 թվականի սկզբի դրությամբ, տոկոս




Բնակչության բաշխվածությունը խիստ տարբերվում է՝ կախված ծովի մակարդակից համայնքների բարձրության սիշից: Գյուղական բնակչության գրեթե կեսը կամ Երևանում չբնակվող բնակչության մեկ չորրորդ մասը բնակվում է Հարթավայրային համայնքներում (ծովի մակարդակից մինչև 1300 մ բարձրություն): Լեռնային և Բարձր լեռնային համայնքներում է բնակվում գյուղական բնակչության մեկ երրորդը կամ Հայաստանի (առանց Երևանի) բնակչության 16 տոկոսը:

Բնակչության կենտրոնացումը հարթավայրերում վկայում է Հայաստանի տարածքում բնակչության բաշխման վրա ոչ միայն Երևանի հսկայական ազդեցության, այլև սև բնակլիմայական պայմանների ազդեցիկ դերի մասին:

² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենք, 1995թ.

³ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Տե՛ս. www.edrc.am


Գծապատկեր 2. Հայաստանի գյուղական համայնքների քանակը և բնակչությունն ըստ ծովի մակարդակից բարձրության կիշի



Հայաստանի համայնքները միմյանցից էապես տարբեր են նաև ըստ համայնքների մեծության ցուցանիշների: Համայնքների զգալի մասը փոքր և/կամ գեր փոքր են: Համայնքների շուրջ մեկ երրորդում բնակչությունը քիչ է 500 մարդուց, իսկ կեսում չի գերազանցում 1000 մարդը: Հանրապետության շուրջ 100 գյուղական համայնքների մշտական բնակչությունը կարող է տեղավորվել ընդամենը 1 բազմաբնակարան (5 հարկանի) շենքում: Հանրապետության շուրջ 400 փոքր գյուղական համայնքների բնակչության թվաքանակը, միասին վերցրած, գրեթե համապատասխանում է Երևանի Մալաթիա-Սեբաստիա թաղային համայնքի կամ Գյումրի քաղաքի բնակչության թվաքանակին⁴:

Հանրապետության շուրջ 870 գյուղական համայնքներից մոտ 187-ում բնակվում է հանրապետության գյուղական համայնքների բնակչության գրեթե 60 տոկոսը:

Գծապատկեր 3. Հայաստանի գյուղական և քաղաքային համայնքների ընդհանուր քանակը և բնակչությունն ըստ համայնքների մեծության (առանց Երևանի)




Հայաստանում ակնառու են նաև բնակչության եկամուտների և հարստության բաշխման տարածքային անհամամասնությունները: Գյուղական բնակավայրերում եկամտի հիմնական աղբյուրը գյուղատնտեսությունն է, իսկ ոչ գյուղատնտեսական ՀՆԱ-ն գրեթե նշանակալի չէ: Ընդհանուր առմամբ գյուղատնտեսական եկամուտը Հայաստանի ՀՆԱ-ի շուրջ 18-20 տոկոսն է: Գյուղական բնակավայրերում ստեղծվող համախառն եկամուտը գյուղական բնակչության

⁴ Հաշվարկված է 2001 թ. Մարդահամարի մշտական բնակչության ցուցանիշների հիման վրա:

Նկատմամբ համեմատաբար փոքր է: Այսպես, գյուղատնտեսական հատվածում մեկ շնչին ընկնող նոր ստեղծվող համախառն եկամուտները շուրջ 4 անգամ զիջում են ընդհանուր հանրապետական միջինին:

Գծապատկեր 4. Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն և Գյուղատնտեսության համախառն ավելացված արժեքը, 2005 թվականի համար



* Հաշվարկված է ԱՄՆ դոլարի գնողունակության համարժեքով (PPP), որն ընդունված է = 3:

Այնուամենայնիվ, ծայրահեղ աղքատության ցուցանիշը գյուղական բնակավայրերում հանրապետության միջինի նկատմամբ ամենացածրն է, որը պայմանավորված է պարենի հասանելիության և ապահովման առավել բարձր հնարավորությամբ: Իսկ քաղաքային բնակավայրերում (առանց Երևանի) ծայրահեղ աղքատության և աղքատության ցուցանիշները հանրապետության միջինի նկատմամբ ամենաբարձրն են⁵: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ընտանիքների անապահովության գնահատման 2006 թվականի բազայի, ընտանեկան նպաստ է ստանում մինչև 500 բնակիչ ունեցող գյուղերի բնակչության 26 տոկոսը, իսկ այլ քաղաքների բնակչության՝ 24 տոկոսը, հանրապետական միջին 16.5 տոկոսի դիմաց:

Համաձայն «Անապահով ընտանիքների և սոցիալական ծառայությունները Հայաստանում» հետազոտության⁶ արդյունքների, մեկ շնչի հաշվով 20000 դրամից քիչ ընթացիկ ծախսեր կատարող (սուբյեկտիվ գնահատական) տնային տնտեսությունները մինչև 500 բնակիչ ունեցող փոքր գյուղական համայնքներում կազմել են 82 տոկոս, մնացած գյուղական համայնքներում՝ 61 տոկոս, հանրապետական միջին 54 տոկոսի և Երևանի 40 տոկոսի դիմաց:

⁵ ՀՀ ԱԿԾ Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտության 2004թ. տվյալներ:

⁶ Տե՛ս «Անապահով ընտանիքները և սոցիալական ծառայությունները Հայաստանում» տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտության վիճակագրական զեկույց, «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն», Երևան 2006:

Սոցիալ-տնտեսական ենթակառույցների առկայությունը

Համաձայն ուսումնասիրության, Հայաստանի գյուղական համայնքների շուրջ 24 տոկոսում չկան մթերային խանութներ, հազվադեպ են տնտեսական և շինանյութերի խանութները, սրճարաններ կան գյուղերի 7 տոկոսում, իսկ ռեստորաններ՝ 9 տոկոսում: Իրավիճակը հատկապես սուր է Փոքր գյուղերում, որտեղ հետազոտության համաձայն միայն 47 տոկոսում կան մթերային խանութներ և 6 տոկոսում՝ տնտեսական խանութներ:

Համաձայն հետազոտության, Հայաստանի գյուղական համայնքների գրեթե կեսում գործող ոռոգման համակարգեր չկան, ընդ որում, ոռոգման ցանցը բացակայում է Փոքր գյուղերի 62 տոկոսի մոտ: Փոքր գյուղերի կեսից ավելում չկան տասնամյա դպրոցներ: Գործող մանկապարտեզներ կան Մեծ և միջին գյուղական համայնքների միայն 38 տոկոսում, իսկ Փոքր գյուղական համայնքների՝ ընդամենը 5 տոկոսում:

Առողջապահական հիմնարկների և ենթակառույցների մատչելիությունը ցածր է՝ հիվանդանոցներ և դեղատներ, կարելի է ասել, ընդհանրապես չկան, դրանց մասամբ Մեծ և միջին գյուղերում փոխարինում են ամբուլատորիաները (կան Մեծ և միջին գյուղերի ընդամենը 40 տոկոսում) և բուժկետերը, որոնք առկա են Մեծ և միջին գյուղերի 58 տոկոսում և Փոքր գյուղերի 70 տոկոսում:

Չափազանց ցածր է հիմնական կոմունիկացիաների և հեռահաղորդակցության մատչելիությունը հատկապես Փոքր գյուղերում (տե՛ս աղյուսակ 5): Ինտերնետ, լարային ռադիո, տեղական FM ռադիոալիքները Հայաստանի փոքր գյուղերում անհասանելի են: Փոստային գրասենյակներ չկան Փոքր գյուղերի 65 տոկոսում, բջջային հեռախոսը հասանելի է 53 տոկոսում, իսկ լարային հեռախոսը՝ 40 տոկոսում:

Առնվազն 4 հեռուստաալիք դիտելու հնարավորություն կարող են ունենալ Հայաստանի համայնքների ընդամենը 66 տոկոսում, ընդ որում, Փոքր համայնքների միայն 47 տոկոսը:

Ոռոգման շուրջ համեմատաբար հասանելի է Հարթավայրային կամ Մեծ և միջին համայնքներում: Նախալեռնային և ծովի մակարդակից ավելի բարձր դիրքի վրա գտնվող համայնքների շուրջ կեսում գործող ոռոգման համակարգ չկա: Ընդ որում, գործող ոռոգման համակարգ չկա Փոքր գյուղերի 62 տոկոսում և Բարձր լեռնային գյուղերի 65 տոկոսում:


Աղյուսակ 5. Առանձին ենթակառույցների առկայությունը գյուղական համայնքներում, չունեցողների տոկոսը խմբի մեջ

N	Ենթակառույցներ	Ընդամենը	Մեծ և միջին	Փոքր	Հարթավայրային	Նախալեռնային	Լեռնային	Բարձր լեռնային
1	Մթերային գործող խանութ	24%	13%	53%	15%	30%	32%	28%
2	Տնտեսական գործող խանութ	73%	65%	94%	62%	79%	80%	80%
3	Շինանյութերի գործող խանութ	94%	91%	99%	89%	95%	99%	97%
4	Գործող վարսավիրանոց	81%	74%	100%	67%	86%	96%	92%
5	Գործող հասարակական բաղնիք	99%	99%	100%	98%	99%	100%	99%
6	Կենցաղսպասարկման կենտրոն	98%	98%	99%	98%	98%	100%	99%
7	Դեղատուն	87%	83%	99%	83%	92%	94%	84%
8	Գործող բուժկետ	38%	42%	29%	46%	31%	27%	40%
9	Գործող ամբուլատորիա	68%	59%	92%	55%	74%	76%	79%
10	Գործող հիվանդանոց	97%	97%	100%	99%	96%	98%	96%
11	Ատամնաբույժ/ ատամնատեխնիկ	85%	79%	99%	78%	88%	93%	87%
12	Անամնաբույժ	16%	11%	30%	17%	17%	20%	11%
13	Հանրակրթական տասնամյա դպրոց	19%	7%	51%	19%	21%	18%	20%
14	Գործող մանկապարտեզ	71%	62%	95%	59%	77%	81%	77%
15	Գործող մարզադպրոց/ խմբակ	90%	87%	100%	84%	94%	94%	96%
16	Գործող արվեստի դպրոց/ խմբակ	90%	86%	100%	86%	91%	97%	90%

17	Գործող գրադարան, մշակութային այլ հաստատություններ և խմբակներ	20%	14%	34%	16%	26%	20%	21%
18	Գործող ելեղեցի (որտեղ պարբերաբար անցկացվում են ծեսեր)	83%	80%	91%	84%	83%	80%	83%
19	Պարարտանյութ կամ սերմացու մատակարարող կազմակերպություն	95%	95%	94%	96%	93%	95%	96%
20	Գործող կոյուղի	83%	81%	88%	81%	81%	86%	87%
21	Խմելու ջրի գործող ցանց	13%	12%	14%	14%	18%	6%	10%
22	Ոռոգման ջրի գործող ցանց	44%	37%	62%	29%	50%	49%	65%
23	Լարային հեռախոսակապ	27%	22%	40%	23%	29%	21%	40%
24	Բջջային հեռախոսակապ	32%	24%	53%	25%	41%	40%	29%
25	Փոստային գրասենյակ	30%	17%	65%	23%	34%	35%	39%
26	Ջեռուստատեսային առնվազն չորս ալիք	34%	26%	53%	29%	43%	34%	33%
27	Լարային ռադիո	96%	96%	97%	96%	95%	96%	97%
28	FM-ի հայկական և ռուսական ռադիոալիքներ	61%	55%	77%	52%	61%	72%	73%
29	Ինտերնետ	89%	86%	98%	82%	91%	97%	96%
30	Շաբաթական մամուլ	56%	48%	76%	49%	55%	60%	67%
31	Հացի արտադրամաս, փուռ	86%	81%	99%	77%	90%	96%	90%
32	Ռեստորան	91%	90%	95%	89%	88%	96%	97%
33	Սրճարան	93%	91%	100%	90%	93%	97%	97%
34	Բենզալցակայան	73%	63%	98%	63%	74%	85%	80%
35	Ավտոտեխսպասարկման փոքր կետ	86%	81%	98%	80%	88%	94%	90%


Թեև գյուղական համայնքների մեծամասնությունում առկա է խմելու ջրի գործող ցանց (տե՛ս աղյուսակ 5), սակայն տնային տնտեսությունների մեծ մասի տանը խմելու ջուր չկա: Այսպես, համայնքների 30 տոկոսում կամ ընդհանրապես չկա խմելու ջուր, կամ այն հասանելի է տնային տնտեսությունների միայն 25 տոկոսին: Այս ցուցանիշը հատկապես բարձր է Փոքր համայնքներում և Բարձր լեռնային համայնքներում (տե՛ս գծապատկեր 5): Տանը խմելու ջրի հասանելիությունը բարձր է Լեռնային և Հարթավայրային համայնքներում՝ նման տիպի համայնքների շուրջ 40 տոկոսում խմելու ջուրը հասանելի այդ համայնքների տնային տնտեսությունների ավելի քան 75 տոկոսին:

Գծապատկեր 5. Հոսող խմելու ջրի հասանելիությունը համայնքներում (տոկոս խմբի մեջ)



Բնական գազի հասանելիությունը չափազանց ցածր է Փոքր գյուղական համայնքներում: Դրանց 90 տոկոսում կամ ընդհանրապես բնական գազ չկա, կամ հասանելի է տնային տնտեսությունների մինչև 25 տոկոսին: Մեծ և միջին համայնքների թեև գրեթե կեսում բնական գազ կա, սակայն այն համայնքները, որոնց բնակչության ավելի քան 75 տոկոսն օգտվում է գազից՝ կազմում են 20 տոկոս:


Պատկեր 6. Բնական գազի հասանելիությունը համայնքի տնային տնտեսություններում (տոկոս խմբի մեջ)



Հեռավորությունը կենտրոնից և ճանապարհների վիճակը


Ուսումնասիրված համայնքների վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանում Մեծ և միջին համայնքների շուրջ կեսը գտնվում են Երևանից մինչև 90 կմ հեռավորության վրա, ընդ որում, դրանց 23 տոկոսը գտնվում է մինչև 30 կմ հեռավորության վրա: Մինչդեռ Փոքր գյուղական համայնքների ավելի քան 78 տոկոսը Երևանից հեռու է 90 կմ-ից ավելի, ընդ որում, 33 տոկոսը 180 կմ-ից հեռու է: Գծապատկեր 7-ը նկարագրում է Փոքր և Մեծ և միջին համայնքների ամենահարմար ավտոճանապարհային գծով հեռավորությունը Երևանից:

Գծապատկեր 7. Համայնքների հեռավորությունը մայրաքաղաքից՝ ըստ համայնքի մեծության նիշերի, տոկոսներով (Մեծ և միջին համայնքները՝ 100% և Փոքր համայնքները՝ 100%)




Փոքր համայնքները հիմնականում բավականին հեռու են Երևանից, սակայն դրանք ընդգծված բարձունքայնության հատկանիշ չունեն: Երևանից ավտոճանապարհային գծով 90 կմ-ից ավելի հեռու Փոքր համայնքների 20 տոկոսը՝ հարթավայրային են, 23 տոկոսը՝ նախալեռնային են, 19 տոկոսը՝ լեռնային են և 16 տոկոսը՝ բարձր լեռնային: Երևանից հատկապես հեռու են փոքր հարթավայրային գյուղերի 14 տոկոսը՝ ավելի քան 180 կմ:

Գծապատկեր 8. Փոքր գյուղական համայնքների հեռավորությունը մայրաքաղաքից՝ ըստ բարձունքային նիշի, տոկոսներով (ընդամենը Փոքր համայնքները՝ 100%)




Մեծ և միջին գյուղերի հիմնական մասը՝ մոտ 62 տոկոս, և Փոքր գյուղերի 40 տոկոսը գտնվում են մոտակա պետական մայրուղուց մինչև 5 կմ հեռավորության վրա: Փոքր գյուղերի 29 տոկոսը մայրուղուց 15 կմ-ից հեռու է:


Գծապատկեր 9. Համայնքների հեռավորությունը մոտակա պետական մայրուղուց (տոկոս)



Գծապատկեր 10. Փոքր գյուղերի հեռավորությունը մայրուղուց (տոկոս)




Գծապատկեր 11. Մեծ և միջին գյուղերի հեռավորությունը մայրուղուց (տոկոս)




Չնայած պետական մայրուղիներից ոչ մեծ հեռավորությանը, մինչև մայրուղի ընկած ավտոճանապարհը բարեկարգ է Մեծ և միջին համայնքների միայն 14 տոկոսի, իսկ Փոքր համայնքների ընդամենը 8 տոկոսի մոտ: Համայնքից մինչև պետական մայրուղի ընկած ճանապարհին ամբողջությամբ քանդված կամ գրունտային է Մեծ և միջին համայնքների 42 և Փոքր համայնքների 57 տոկոսի մոտ:

Գծապատկեր 12. Համայնքից պետական մայրուղի տանող ճանապարհների վիճակը (տոկոս)



Ուսումնասիրությունը պարզել է, որ Հայաստանում բացառիկ են այն համայնքները, որոնց ներքին ճանապարհներն ամբողջությամբ բարեկարգ են (տե՛ս Գծապատկեր 13): Փոքր գյուղական համայնքների 78, իսկ Մեծ և միջին համայնքների 70 տոկոսի մոտ ճանապարհները գրունտային են:

Գծապատկեր 13. Ներհամայնքային ճանապարհների վիճակը (տոկոս)



Անշարժ գույքի գները

Անշարժ գույքի գները մեկ այլ կարևոր ցուցանիշ է, որը կարող է բնութագրել համայնքի նկատմամբ ընդհանուր հետաքրքրվածությունը և սոցիալ-տնտեսական պայմանները: Անշարժ գույքի շուկան կարելի է համարել համայնքի գնահատման անկախ և օբյեկտիվ մեխանիզմ: Այսինքն՝ անշարժ գույքի և հողի գների տարբերությունն ինքնին, ըստ էության, համայնքների, շուկայի միջոցով դասակարգման տարբերակ է:

Այսպիսով, անշարժ գույքի գները գյուղական համայնքներում, ինչպես և սպասվում էր, էապես տարբերվում են մայրաքաղաքի և մեծ քաղաքների գներից: Փոքր գյուղական համայնքների շուրջ 35 տոկոսում 1 հարկանի միջին առանձնատան վաճառքի դիմաց հևարավոր չի լինի գներ Երևանի կենտրոնում 1 մետր քառակուսի բնակտարածք:


Գյուղական համայնքների միայն 7 տոկոսում է, որ մեկ հարկանի առանձնատան միջին գինը գերազանցում է 10000 ԱՄՆ դոլարը, ընդ որում, դրանք միայն Մեծ և միջին գյուղերն են:

Աղյուսակ 6. 1 հարկանի առանձնատան միջին շուկայական գները գյուղական համայնքներում

	Ընդամենը համայնքներ		Մեծ և միջին համայնքներ		Փոքր համայնքներ	
	տոկոս	կուտակային տոկոս	տոկոս	կուտակային տոկոս	տոկոս	կուտակային տոկոս
մինչև 1000 ԱՄՆԴ	13.6	13.6	6.3	6.3	35.3	35.3
1000-3000 ԱՄՆԴ	29.8	43.4	25.6	31.9	42.0	77.3
3000-6000 ԱՄՆԴ	27.0	70.4	31.1	63.0	15.1	92.4
6000-10000 ԱՄՆԴ	17.4	87.9	21.1	84.0	6.7	99.2
10000-15000 ԱՄՆԴ	5.3	93.2	7.1	91.2	0.0	99.2
15000-20000 ԱՄՆԴ	5.1	98.3	6.6	97.7	0.8	100.0
20000 ԱՄՆԴ-ից ավելի	1.7	100.0	2.3	100.0	0.0	100.0

6000-ից մինչև 10000 ԱՄՆ դոլար արժողությամբ առանձնատներ ամենաշատը Զարթավայրային գյուղերում կան: 10000 դոլարից բարձր արժողությամբ առանձնատներ ամենաքիչ ունեցող համայնքները Լեռնային են:


Գծապատկեր 14. 1 հարկանի առանձնատան վաճառքի միջին գները (տոկոս խմբի մեջ)



Չանրապետության գյուղական համայնքների մեծամասնությունում առանձնատների վարձակալության գները չափազանց ցածր են: Չանրապետության գյուղական համայնքների


ավելի քան 45 տոկոսում վարձակալության գինը չի գերազանցում 5000 դրամը, եթե իհարկե առաջարկվող մրցակցային է կամ գործարքներ կնքվում են:

Գծապատկեր 15. 1 հարկանի առանձնատան վարձակալության միջին գները (տոկոս խմբի մեջ)



Չետագոտությունը պարզել է նաև, որ գյուղատնտեսական նշանակության հողերի գները նույնպես զգալիորեն տարբերվում են համայնքի մեծության և ծովի մակարդակից բարձրության նիշից կախված: Ընդհանուր առմամբ Մեծ և միջին կամ Հարթավայրային համայնքներում հողերի գները բարձր են: Գյուղատնտեսական հողերի ամենացածր գները Բարձր լեռնային համայնքներում են: Հատկանշական է, որ ի տարբերություն Նախալեռնայինների, Լեռնային համայնքների բավականին մեծ մասում գյուղընտանակության հողակտորներն ավելի թանկ են:

Գծապատկեր 16. Գյուղընտանակության տնամերձ 1 ար հողակտորի վաճառքի միջին գները (տոկոս խմբի մեջ)




Աղքատության և սոցիալական ծառայությունների սուբյեկտիվ գնահատականները

Աղքատության և ծայրահեղ աղքատության սուբյեկտիվ գնահատականներին վերաբերող հարցերի պատասխանները հռեռետեսական են: Համաձայն պաշտոնական վիճակագրության 2005 թվականին գյուղերում աղքատությունը կազմել է 28 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատությունը՝ 3.2 տոկոս: Գյուղական համայնքների ղեկավարների (կամ աշխատակազմի) ավելի քան 20 տոկոսի գնահատականներով ծայրահեղ աղքատությունն իրենց համայնքներում գերազանցել է 30 տոկոսը:


Փոքր գյուղական համայնքների ղեկավարների միայն 30 տոկոսը և Մեծ և միջին գյուղական համայնքների՝ 24 տոկոսն են գնահատել, որ իրենց համայնքներում ծայրահեղ աղքատությունը չի գերազանցում 5 տոկոսը:

Չճապատկեր 17. Համայնքում աղքատ տնային տնտեսությունների քանակը, սուբյեկտիվ գնահատականները




Այնուհանդերձ, Մեծ և միջին գյուղական համայնքների ղեկավարների 61 տոկոսի և Փոքր համայնքների 49 տոկոսի կարծիքով իրենց համայնքներում բարեկեցությունը հարևան համայնքների համեմատ գրեթե նույնն է: Մեծ և միջին համայնքների միայն 26 տոկոսն են նշել, որ իրենց համայնքը հարևանների նկատմամբ շատ ավելի աղքատ է, իսկ Փոքրերի՝ 40 տոկոսը:

Գծապատկեր 18. Հարևան համայնքների համեմատ համայնքի բարեկեցության սուբյեկտիվ գնահատականները




Համայնքների ղեկավարների մեծամասնության կարծիքով Աղքատության ընտանեկան նպաստի համակարգով օգնություն ստացողներից գրեթե բոլորը կարիքավոր են: Մեծ և միջին գյուղական համայնքների միայն 7 և Փոքր գյուղական համայնքների շուրջ 11 տոկոսն են գտնում, որ համակարգում ընդգրկվածների կեսից ավելին կարիքավոր չեն:

Գծապատկեր 19. Մեծ և միջին համայնքներում աղքատության ընտանեկան նպաստի համակարգով օգնություն ստացողների կարիքավորության սուբյեկտիվ գնահատականները



Հատկապես Մեծ և միջին Հարթավայրային գյուղական համայնքների ղեկավարներն են համոզված, որ իրենց համայնքում Աղքատության ընտանեկան նպաստի համակարգով օգնություն ստացողներից գրեթե բոլորը կարիքավոր են:

Գծապատկեր 20. Փոքր համայնքներում աղքատության ընտանեկան նպաստի համակարգով օգնություն ստացողների կարիքավորության սուբյեկտիվ գնահատականները




Աղքատության ընտանեկան նպաստները և ընդհանրապես դրամական օգնությունն ամենապահանջված և կարևորված սոցիալական ծառայությունն է: Համայնքի ղեկավարների ավելի քան 90 տոկոսը կարևորել են ընտանեկան նպաստները:

Հաջորդ կարևորված սոցիալական ծառայությունը Փոքր կամ միկրո բիզնեսի համար ոչ մեծ վարկերի տրամադրումն է: Համայնքների շուրջ 83 տոկոսն այս ծառայությունը համարել են ամենակարևորներից մեկը: Հատկանշական է, որ այս ծառայությունն ամենաշատը նախընտրվել է Հարթավայրային համայնքներում և Մեծ և միջին համայնքներում:

Կարևորվել է նաև Արտոնությունների, ինչպես նաև Մթերքի և սննդի տրամադրումը: Անկախ մեծությունից՝ համայնքների 30 տոկոսն այս ծառայությունները համարել են առաջնային:

Գծապատկեր 21. Սոցիալական ծառայությունների առաջնահերթության գնահատականը



Ընդհանուր առմամբ Լեռնային և Բարձր լեռնային համայնքներում առավել շատ կարևորել են դրամական և սննդի օգնության ծառայությունները, իսկ Հարթավայրային համայնքներում՝ վարկերի տրամադրման ծառայությունները:

Քիչ են կարևորվել տնային պայմաններում և ծերանոցներում ծերերի խնամքի, ինչպես նաև երեխաների շուրջօրյա խնամքի, ժամանակավոր օթևանի տրամադրման և հաշմանդամների հոգեբանական ծառայությունների տրամադրման ծառայությունները: Աղյուսակում տրված են հետազոտությամբ բացահայտված հնարավոր սոցիալական ծառայությունների առաջնահերթությունների և կարևորության աստիճանի գնահատականները:

Աղյուսակ 7. Սոցիալական ծառայությունների առաջնահերթության գնահատականը

Ծառայության անվանումը	Կարևորության աստիճանը	Կարևորության դասակարգիչ
Դրամական օգնության՝ նպաստների ստացում	1	Առավել կարևորված
Փոքր կամ միկրո բիզնեսի համար ոչ մեծ վարկեր	2	Առավել կարևորված
Արտոնությունների տրամադրում	3	Կարևորված
Մթերքի և սննդի տրամադրում	4	Կարևորված
Հաշմանդամների բժշկական և վերականգնողական ծառայությունների տրամադրում	5	Նվազ կարևորված
Իրավաբանական օգնություն	6	Նվազ կարևորված
Երեխաների շուրջօրյա խնամք	7	Գրեթե չկարևորված
Սոցիալական ծառայությունների ստացման մասին խորհրդատվություն	8	Գրեթե չկարևորված
Տնային պայմաններում ծերերի խնամքի կազմակերպում	9	Գրեթե չկարևորված
Ժամանակավոր օթևանի տրամադրում	10	Գրեթե չկարևորված
Ծերանոցներում ծերերի խնամքի կազմակերպում	11	Չկարևորված
Հաշմանդամների հոգեբանական ծառայությունների տրամադրում	12	Չկարևորված

Գ. Համայնքների դասակարգման և խմբավորման մեթոդաբանություն

Անհրաժեշտությունը

Քանի որ Հայաստանի համայնքների միջև առկա են մեծ տարբերություններ կամ կան էական առանձնահատկություններ, հնարավոր է, որ այլ հավասար պայմաններում, դրանք պայմանավորեն բնակչության կենսամակարդակների միջև էական տարբերություններ և նշանակալի լինեն ընտանիքների անապահովության գնահատման արդյունավետության առումով: Նման հնարավոր առանձնահատկությունների բացահայտումը և գնահատումը կարևոր է քաղաքականության և սոցիալական աջակցության արդյունավետության բարձրացման առումով:

Ներկայում համայնքային առանձնահատկությունները գնահատվում են (հաշվի են առնվում) ընտանեկան նպաստների համակարգում: Ընդհանուր առմամբ, ընտանեկան նպաստի իրավունք ստանում են այն տնային տնտեսությունները, որոնց անապահովության գնահատման համապատասխան ցուցանիշների արժեքների (բալերի) գումարային մեծությունը գերազանցում է սահմանային արժեքին: Որպես անապահովության գնահատման ցուցանիշ կիրառվում է նաև բնակավայրի ցուցանիշը, որի կիրարկմամբ բացարձակապես նույն սոցիալական, դեմոգրաֆիական և տնտեսական հատկանիշներ ունեցող երկու տարբեր ընտանիքների միավորները (անապահովության գնահատման ցուցանիշների արժեքների գումարային մեծությունը) կարող է տարբերվել, եթե մի ընտանիքը բնակվում է մյուսի համեմատ առավել աղքատ համարվող բնակավայրում: Այսինքն՝ համայնքի վատ լինելը մեծացնում է տվյալ համայնքում բնակվող ընտանիքի նպաստների համակարգում ընդգրկվելու հավանականությունը (Կտ գործակից):

Միաժամանակ համայնքային պայմանների ազդեցությունը հաշվի է առնվում նաև ընտանեկան նպաստի գումարի չափը որոշելիս: Գործող բանաձևում նպաստի իրավունք ունեցող բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրերում բնակվող ընտանիքների նպաստի գումարի հաշվարկային մեծությունը գերազանցում է հանրապետության այլ բնակավայրերում բնակվող նույն տիպի ընտանիքների նպաստի մեծությունը: Սա, ըստ էության, զուտ սոցիալական քաղաքականությունն է միայն, այլ իր մեջ ներառում է նաև տարածքային կառավարման տարրեր:

Ներկայացված երկու մոտեցումները բավականին տարբեր են՝ առաջինը վերաբերվում է այն հարցին, թե ու՞մ է պետք ընդգրկել սոցիալական աջակցության համակարգում, մյուսը վերաբերում է այն հարցին, թե ինչպե՞ս ապահովել հավասար կենսապայմաններ:

Անապահովության գնահատման, կամ համակարգում ընդգրկման⁷ չափորոշիչներում բնակավայրի (համայնքի) գործակցի ներառումը ենթադրում է, որ հանրապետության տարբեր համայնքներում աղքատ կամ անապահով լինելու չափանիշները համարվում են տարբեր: Այսինքն՝ տվյալ հատկանիշներ ունեցող ընտանիքը մի համայնքում կարող է համարվել անապահով (ընտանեկան նպաստների համակարգի տեսանկյունից), իսկ մյուսում ոչ: Ակտիվների, եկամուտների, կարողությունների և ունակությունների նույն մակարդակն ունեցող ընտանիքները կունենան նույն նվազագույն կարիքները, սակայն այդ նույն կարիքների բավարարման հնարավորությունները (մատչելիությունը) կամ դրա համար կատարվող ծախսերը՝ կախված բնակության վայրից, կարող են տարբեր լինել (օրինակ. ենթակառուցվածքների հեռավորություն կամ բացակայություն, գների մակարդակ, ունակությունների կամ ակտիվների գործարկման (եկամուտ ստեղծելու) տարբեր

⁷ Տեքստում «Համակարգում ընդգրկվել» արտահայտությունն օգտագործվում է սոցիալական աջակցության իրավունք ստանալու իմաստով, և չի վերաբերվում ընտանեկան նպաստների համակարգում հաշվառմանը: Վերջինիս իրավունքը Հայաստանում ունեն բոլոր ընտանիքները՝ ովքեր համարում են իրենց անապահով:

հնարավորություններ): Այսինքն՝ հնարավոր է, որ մեկ ընտանիքը կարողանա բավարարել իր նվազագույն կարիքները, իսկ մյուսը՝ ոչ: Ուստի վերջինս սոցիալական աջակցություն ստանալու առումով պետք է համարվի անապահով ընտանիք և ներառվի համակարգում, իսկ մյուսը՝ համակարգում ընդգրկման համեմատաբար փոքր շանս ունենա: Այս մոտեցումը կարդարացվի, եթե սոցիալական աջակցության տվյալ տեսակը միատարր չէ, այսինքն՝ մի գործիքն իր մեջ ներառում է սոցիալական աջակցության տարբեր տեսակներ կամ ձևեր: Հակառակ դեպքում, մեր բերած երկու ընտանիքներն էլ պետք է դուրս մնային համակարգից կամ ընդգրկվելու նույն շանսն ունենային: Իսկ այն ընտանիքը, որը, ենթադրենք, դպրոցի հեռավորության կամ բացակայության պատճառով չէր կարողանում բավարարել իր կարիքները, պետք է սոցիալական աջակցության այլ տեսակով ստանար տրանսպորտային ծախսերի փոխհատուցում:

Փաստորեն, համայնքների առանձնահատկությունների գնահատումը և համայնքների դասակարգումը դառնում է սոցիալական քաղաքականության խնդիրներից մեկը, քանի որ այն հնարավորություն է տալիս բարձրացնել սոցիալական քաղաքականության հասցեականությունը: Այսինքն՝ հնարավոր է տարբերակված մոտեցում ունենալ տարբեր համայնքներում սոցիալական ծառայությունների տրամադրման տեսանկյունից: Ընդ որում այն կարևորվում է երկու ասպեկտով: Առաջինը, համայնքային առանձնահատկությունները կամ ընտանիքի բնակության վայրի պայմանները, կարող են որոշիչ լինել շահառուներին համակարգում ընդգրկման տեսանկյունից, և երկրորդ՝ ծառայությունների մատուցման ընթացքում շահառուների համար հավասար և արդար պայմանների ապահովման տեսանկյունից:

Թեև ներկայում համայնքային գործակիցները կիրառվում են միայն ընտանեկան նպաստների համակարգում, առաջարկվում է, որ նման տարբերակված մոտեցումներ կիրառել նաև սոցիալական ծառայությունների այլ տեսակների մշակման ընթացքում ևս:

Սույն ուսումնասիրության շրջանակներում համայնքների դասակարգման համար մշակված մեթոդաբանությունն ընդհանրական է: Այսինքն խնդիրն է ստեղծել համայնքների դասեր և գնահատել այդ դասերին պատկանող համայնքների ընդհանուր սոցիալ-տնտեսական պայմանները, որոնք, այլ հավասար պայմաններում, փոխում են աղքատ ընտանիքների բարեկեցությունը: Դասերի ստեղծումը հնարավորություն կտա սոցիալական ծառայությունների կոնկրետ տեսակների համար հետագայում կատարել կոնկրետ խմբավորումներ, կամ առանձին խնդիրների համար յուրաքանչյուր խմբին տալ քաղաքականության անհրաժեշտ գործակիցներ:

Մեթոդաբանությունը

Մշակված և ներկայացվող մեթոդաբանությունը նպատակ ունի նախ պարզել, թե արդյո՞ք Հայաստանի համայնքների միջև առանձնահատկությունները, այլ հավասար պայմաններում, նվազեցնում են տնային տնտեսությունների կենսամակարդակը և ստեղծում տարբերություններ: Միաժամանակ, այս մոտեցմամբ գնահատվում և ստեղծվում են համայնքների դասեր, որոնք հետագայում, ելնելով կոնկրետ խնդրից, բյուջետային և այլ սահմանափակումներից, կարող են պարբերաբար խմբավորվել կամ տարանջատվել՝ յուրաքանչյուր խմբի համար սահմանելով քաղաքականության տարբերակման համեմատական գործակիցներ:

Համայնքների առանձնահատկությունների բացահայտման և գնահատման համար նախապես մշակվում են կանխավարկածներ, որոնք կարող են տարբերակել համայնքները կամ դրանցում բնակվող տնային տնտեսությունների կենսամակարդակը՝ հանրապետական միջինի նկատմամբ: Կանխավարկածների ձևակերպումից հետո առանձնացվում են կանխավարկածները ստուգող փոփոխականներ, որոնց վերաբերյալ

